№ 171 Հոկտեմբերի 6 (18) 1879 Հոկտեմբերի 6 (18) № 171

ՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլ կէս տարվանը 6 ռուբլ։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի Тифлисъ. Редакція „Мшакъ“

ՄՇԱԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Քաղաքական վերջին անցքերը։—Ներքին տեսութիւն։ Մի քանի դիտողութիւններ։ Նամակ Նուխուց։ Նամակ Գանձակից։ Նամակ Ղարսից։ Նամակ խմբագրին։ Նամակ խմբագրին։ Նամակ խմբագրին։ Նամակ խմբագրին։ Նամակ խմբագրին։ Ներքին լուրեր։—Արտաքին տեսութիւն։ Կանոնագիր հայոց հեց ընկերութեան։ Անգլիա։ Բուլգարիա։ Իտալիա։—Խառն լուրեր։—Յայտարարութիւններ։—Տեղեկացոյց։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԵՐՋԻՆ ԱՆՑՔԵՐԸ

—

Թէ ինչպիսի փոփոխութեան ենթարկվեցաւ աֆղանական գործերի ընթացքը Կաբուլի մէջ պատահած արիւնհեղութենից յետոյ, յայտնի է մեր ընթերցողներին։ Անգլիական թէ անկախ և թէ պաշտօնական լրագիրները շատ յօդուածներ տպեցին այդ գործի վերաբերութեամբ, բայց ինքն, անգլիական կառավարութիւնը մինչև այժմ լռութիւն է պահում իր ապագայ գործունէութեան եղանակի մասին, այնպէս որ անգլիական հասարակութեանը յայտնի չէ, թէ կառավարութիւնը ի՞նչ է անելու։

Նորերումս, սովորական ժամանակից առաջ, սկսվեցան անգլիական մինիստրների ժողովները, բայց այնու ամենայնիւ կառավարութիւնը դեռ ոչինչ չէ յայտնել։ Անգլիական ազատամիտ լրագրութիւնը վաղուց կառավարութենից բացատրութիւններ է պահանջում, բայց մինչև այժմ ոչինչ չէ ստացել։ Այսքանը միայն ամենքին յայտնի է, որ Աֆղանիստանի էմիրը գտնվում է անգլիական բանակի մէջ և որ գեներալ Ռոբերտս հրաման է ստացել յարձակվել Կաբուլի վրա։ Ինչպէս երևում է լրագիրների թղթակցութիւններից, անգլիական զօրքերին դեռ ևս ոչ թէ միայն չէ յաջողվել գրաւել Աֆղանիստանի մայրաքաղաքը, այլ մինչև անգամ նրան դեռ ևս շատ չեն էլ մօտեցել և ճանապարհին անդադար արգելքների են պատահում, անդադար կռվելով աֆղանական զօրախումբերի հետ։ Միւս կողմից ապատամբների առաջնորդներն էլ անգործ չեն մնում և ամրացնում են Աֆղանիստանի մայրաքաղաքը։

Անգլիական լրագիրների թղթակցութիւններից երևում է, որ Կաբուլի մէջ հետզհետէ աւելանում են ապստամբ զօրքեր։

Այսպէս, թէ այնպէս եթէ մինչև անգամ գեներալ Ռոբերտսին աջողվի շուտով գրաւել Կաբուլ, այդ գործը չէ կարող հաստատել Գանդամակի խաղաղական դաշնագիրը։

Իտալական քաղաքական շրջանները այժմ չափազանց գրգռված են։ Գերմանիայի դաշնակցութիւն կապելը Աւստրո-Ունգարիայի, Իտալիայի այդ դարևոր հակառակորդի հետ, իտալական կառավարութեան ունեցած անաջողութիւնները եգիպտական գործերում չափազանց վրդովում են իտալական հասարակական կարծիքը։ Եթէ այս բոլոր անաջողութիւնների վրա աւելացնենք և այն հանգամանքը, որ իշխան Ռիմարկ Վիէննա եղած ժամանակը փոխադարձապէս չայցելեց իտալական դեսպանին, քանի որ իշխանը այցելեց բոլոր պետութիւնների, մինչև անգամ Թիւրքիայի դեսպանին, այն ժամանակ հասկանալի կը լինի իտալական թէ հասարակութեան և թէ լրագրութեան վրդովմունքը։ Լրագիրները անդադար յարձակվում են Կայրոլիի և Դեպրետիսի մինիստրութեան վրա և յայտնի մեղադրում են, որ դրանք իրանց կառավարութեան ժամանակ կորցրին Իտալիայի նշանակութիւնը։

Վ. Տ.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

—

ՔԱՆԻ ՄԻ ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ԳԷՈՐԳԵԱՆ ԵՒ ԱՑԼ ԴՈՐՍ. ՆՄԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՈՒԹԵԱՄԲ

—

Երբ մեր ազգի բանիմաց, առանց կղերական կամ որ և իցէ նախապաշարմունքի մասը, չը նայելով մեր տգէտ սուտ մարգարէների ասածին, դեռ Էջմիածնի Գէորգեան ճեմարանի (?) չը հիմնելը ընդդէմ էին Վաղարշապատի պէս տեղ մի մեծ ուսումնարան հիմնելուն, նրանք երկու հիմնաւոր պատճառ ունէին. տնտեսական և բարոյական։

Տնտեսական տեսակէտից նրանք ապացուցանում էին, թէ մի բարձրագոյն դպրոցի նախագիծով դպրոց, որը Թիֆլիսի պէս քաղաքում կարող էր պահանջել երկու հարիւր հազար ռուբլ, ոչ թէ էջմիածնում կամ Վաղարշապատում, այլ Երևանի պէս քաղաքում անգամ տասնապատիկ առաւել դրամով դժուար էր իրագործել, որովհետև թէ շինութեան ամենայն պարագայքը և թէ շինութեան զանազան մասների վարպետները պէտք է հեռաւոր տեղերից բերել։

Բացի այն, երբ որ դպրոցը շինվի, Էջմիածնում անկարելի է ունենալ այն ամենայն ուսուցիչները զանազան գիտութեանց և առարկաներին վերաբերեալ, որոնց կարելի է ունենալ Թիֆլիսի պէս մայրաքաղաքում, ուր կենտրոնացած են Անդրկովկասեան թէ գլխաւոր մըտաւոր ուժերը—հայ, ռուս և այլ օտարազգիներինը և թէ այլ գիտութեան նպաստող պարագաները և Ռուսաստանի ու Եւրոպայի առաւել մօտ լինելը։

Ժամանակը ցոյց տուեց վերոյիշեալ ընդդէմ լինողների արդարացիութիւնը։

Բայց մասնաւորապէս վերոյիշեալ անձանց ընդդէմ լինելը բարոյական տեսակէտի վրա էր հիմնված։

Նոքա իրաւացի ասում էին, թէ գործը այն չէ, որ ո՞րքան քանակութեամբ կարելի է ուսանել որ և իցէ լեզու կամ գիտութիւն Թիֆլիսում, նոյն քանակութեամբ մի և նոյնն էլ տասնապատիկ նիւթաւոր 'ի զուր զոհաբերութեամբ ուսուցանել Էջմիածնում, նրանք երկնչում էին մտաւոր ու բարոյական ճնշումից, որը պէտք է խանգարէ, ապականէ ուսանող մանուկների ազատ հասկացողութիւնը և բնաւորութիւնը Էջմիածնի պէս մտաւոր փտած, սահմանափակ և կոյր հասկացողութեան մէջ ընկղմված շրջանը, որը մաշում է և իր տգէտ հասկացողութեամբ չէ կարող չը մաշել ապագայ սերունդի և գործողների ուղեղը։

Այլապէս չէ կարող լինել, սրա նախադուշակելը մի մեծ բան չէր փոքր 'ի շատէ ազատ, առանց նախապաշարմունքի հասկացողութեան տէր անձանց համար. ազգերի պատմութիւնը մեզ ապացոյց է այս ճշմարտութեանը, մանաւանդ պապականութեան և եզուիտութեան գործունէութիւնը բոլոր ազգերի մէջ։ Sapienti sat.

***

ՆԱՄԱԿ ՆՈՒԽՈՒՑ

1 հոկտեմբերի

Վերջին նամակովս խոստացայ մեր դպրոցի նիւթականի մասին խօսել՝ նամակիս նիւթն էլ այժմ հէնց այդ կը լինի։

Նիւթական դրութիւնը մեր դպրոցի նոյնքան անկարգ ու անկանոն է, որքան և նրա միւս գործերը։ Նա մօտ 20 տարի է, ինչ որ գոյութիւն ունի՝ կառավարվում է անհաստատ աղբիւրներով՝ այն է սրբադրամներով, պսակադրամներով, աշակերտներից ստացվող տարեկան վճարքով, պատահական նուիրատուութեամբ և եկեղեցական 60 ռուբլու չափ տարեկան գանձանակով, որոնք ի միասին այս տարի կարող են հասնել 1300 ռուբլու, միւս տարի 1500 (մինչ աւել ու պակաս), բայց ճիշդը երբէք չէ յայտնվել և գաղտնիք է մնացել։—Դպրոցի նշանաւոր արդիւնքը կազմում են սրբադրամները և նշանաւոր սխրագործութիւններն էլ հէնց ծածկվում են դրանց մէջ։ Սրբադրամներ ասելով պիտի հասկանալ իւրաքանչիւր տան տարեկան վճարելիք 20 կոպէկը։ Սա ժողովվում է թէ քաղաքացիներից և թէ մի քանի գիւղերի բնակիչներից։ Քաղաքում և գիւղերում սրբադրամ ժողովողները քահանաներն են։ Հասկանալի է որ մի այս տեսակ մաղով անցկացած ժամանակ մեծ մեծ կտորները դժուարանում են անցնել ծակերով։ Հետևապէս այս տարի սրբադրամները հասնում են 800-ի, միւս տարի սրա կիսին և այլն։

Չը նայած որ սրբադրամով քաղաքացին պարտաւորվում է 20 կոպ. վճարքի, բայց նա չատ անգամ, ինչպէս ականատես եմ եղած, վճարում է 1-ից մինչև 3 ռուբլի՝ թէ իր պատուի և թէ այն նպատակով, որ մի 10, 15 աղքատ տներ դերձ մնան սրբադրամ վճարելու դժուարութիւնից։ Արդեօք սրբադրամ ժողովողներն էլ իւրաքանչիւրից ստացածը ճշտութեամբ նշանակում են սրանցով բաւականացած, թէ աղքատից էլ առնում կրկին չը վճարողների շարքն են ձգում—այդ Աստուած գիտէ։ Մենք մահկանացուներս թոյլ լինելով կասկածի տակ ենք ընկնում, աւելի երբ մեր առաջարկութեան համար թէ՝ «պէտք է սրբադրամներ չը վճարողները ստուգվեն» գլխաւոր ժողովողդործակալի անդուսպ բարկութեանն ենք ենթարկվում։ Բայց միայն սրբադրամները չէն որ մեզ կասկածի են մատնում, արդեօք պսակադրամներն էլ նոյն անապահով վիճակին չեն ենթարկված։ Մթթէ չէ կարելի յօդուտ ուսումնարանի ստացած 1 կամ 2 ռուբլի պսակադրամը մատեանում 3-ով կամ 4-ով կրճատել...Դեռևս թէ չէ կարելի, բայց մթթէ այս տեսակ անհաստատ աղբիւրներով ուսումնարան կը պահպանվի։ Բայց տեսէք մինչև այժմ Նուխու դպրոցը այսպիսի խախուտ հիմքի վրա է հաստատված. այս է նրա ներկայ նիւթական աղբիւրների դրութիւնը։

Քանի որ այսօր մի քանի սրբադրամ վճարող մեծ գիւղեր իրանք իրանց ուսումնարան ունենալով էլ չեն ցանկանում և արդէն տրտնջում են սրբադրամ վճարել, լաւ կը լինէր որ բոլորովին վերացվէր սրբադրամ ժողովելը և դորա փոխարէն Նուխու 600-ի չափ հայ բնակիչներից 300 տուն (ի հարկէ ունևորները) հարկադրվէին իւրաքանչիւր տարի 3-ական ռուբլի վճարքին։ Արդէն հաստատ աղբիւր գտնելու համար նուխեցիք մի քայլ արել են, երկու եկեղեցիների 10,000 ռուբլու չափը գպրոցին սեփականացնելով, և Վեհ. Կաթողիկոսը բարեհաճել է նոցա բարի ցանկութիւնը խրախուսելու, եթէ Գիսոս վանքից, պսակադրամներից և աշակերտներից ստացվող արդիւնքներն էլ կանոնաւորվէին Նուխեցիք իրանք էլ այսուհետև լրջմտութեամբ գործելով, բաց աչք հսկեն իրանց դպրոցի վրա—դա պիտի կարողանայ փոքր ինչ այդ դպրոցին չունչ տալ, աղա թէ ոչ վաղը կամ միւս օրը նա փակվելու վտանգին է ենթարկված։

Զ.

ՆԱՄԱԿ ԳԱՆՁԱԿԻՑ

—

22 սեպտեմբերի

Չը հետևելով բոլորովին քաղաքիս քանի մի նամակագրերի ուղղութեանը, այլ և ի նկատի չը առնելով նոցա այն առանձնաշնորհութիւնը, որ չատ անգամ անտեղի հարցերով խանգարում են ժողովրդի խաղաղութիւնը,—աւելորդ չեմ համարում ի թիւս այլոց թերթիդ միջոցաւ անել քանի մի համառօտ նկատողութիւններ և առաջարկութիւններ Գանձակի հայ հասարակութեանը։

Հարցը դարձեալ ուսումնարանաց վրա է։

Հայ պարբերական թերթերի մէջ չատ անգամ Գանձակի ներքին և արտաքին կեանքի նկարագրութիւնները հրատարակված են, բայց պէտք է ասած, որ նոցանից և ոչ մէկը նորա պահանջներին չէ եղել համապատասխան, նոքա, ինչքան կարելի է, մեծ մասամբ երկու միմեանց հակառակ կուսակցութեան առանձնական այժ ժողովելու ընդունակութիւնն են ունեցել, հետևաբար և պառակտման աւերիչ սերմը մնացել և մնում է այժմս էլ։

Վերջին ժամանակներումս,—իրաւ, «Մշակիդ»

մէջ Գանձակից կեղծ անուն ստորագրութեամբ ուղղած քանի մի նամակներ լոյս տեսան, բայց թէ ինչ բարոյական կապ տուին երկու միմեանց հակառակ կուսակցութեանը, ոչինչ...ընդհակառակն՝ իրար դէմ սպառազինվեցան...(ինչու) որովհետև այդ մարդիկ պատեհ ժամանակի էին սպասում իրար գլխի վրա մեղադրանքներ թափելու։

Քաղաքային գործերի վերաբերութեամբ մանրամասնութիւնները թողնելով միանգամայն, մտնում եմ այժմ Գանձակի երկսեռ դպրոցաց դրութիւնը և այնտեղից սկսում համեստ նկատողութիւններս։

Երևակայիր, ընթերցող, մի բուռն ժողովուրդ որ անզգայութեան մէջ է մնացել և այժմ նա օտարացած է հայրենի օթևանից...ինչ կը լինի արդեօք նորա դրութիւնը... հաւատի լինել կարող ենք արդեօք որ նա մտաւոր և բարոյական շրջաններից զուրկ չէ...Թոյլ տուէք, խնդրեմ պարզ խօսեմ։ Ես մատնացոյց եմ անում այն հասարակութիւնը, որի համար ազգային հարցերի նկատմամբ անտարբերութիւնը և սառնասրտութիւնը մի ժառանգական տիրապետութիւն է դարձած։ Այդ ժողովուրդը Գանձակի հայ հասարակութիւն է։

Ամեն մի քաղաքակիրթ և լուսաւորված ազգ իր յոյսերը դպրոցի մէջ է որոնում, իսկ մեր անկիրթ նահապետական ժողովուրդը չը գիտեմ որտեղից է սպասում։

Այո, քաղաքակիրթ ազգերը իրանց յոյսերը դպրոցներում են որոնում, բայց արդեօք գալու է մի օր ժամանակ, որ մեր ժողովուրդն էլ հասկէր այդ բարի և անպատիր օրինակին, արդեօք կը փութայ նա իր սուրբ պարտականութիւնները ճանաչելու։ Դուք, պատուելի գանձակեցիք, ասում էք որ ուսումնարանը օգուտ չէ տալիս—և այլ սրա նման պահանջմունքներ,—բայց դուք գիտէք ձեր ուսումնարանում ինչ է լինում, թէ ոչ. գիտէք ովքեր են ձեր ուսուցիչները բացի տեղացիներից, —տարվայ մէջ քանի անգամ էք մտնում ուսումնարանի դռնովը. գիտէք ինչ ուսում է աւանդվում նորա մէջ, թէ ոչ...

Այս տարի ինչ էր պատճառը, որ բոլոր առաջին դասատան աշակերտները և աշակերտուհիները թերի արձակվեցան։ Տղայոց դպրոցը քսան տարի ի վեր գոյութիւն ունի, ինչ դրամագլուխ էք կազմել նորա ապագայի համար...ինչ միջոցներով է կառավարվել նա առաջ և ինչ միջոցներով է կառավարվում նա այսօր նոր օրիորդական դպրոցի հետ միասին։

Այս և սորա նման կարևոր հարցերի լրջմտօրէն պատասխանը թողնում եմ մեծապատիւ հոգաբարձուաց բարեյիշեցողութեանը։

Անտարակոյս կը մտաբերէք նախկին թեմական վերատեսուչ արժանապատիւ հայր Ստեփաննոս Տէր-Ստեփաննոսեանին, որ իր գալուստը արդիւնաւորեց Գանձակում առաջին անգամ օրիորդական դպրոցը հիմնելով։—կարգվեց նոր տեսուչ դպրոցի, հրավիրվեցան նոր նոր ուսուցիչներ, և սիստեմատիքաբար նոր նոր հրահանգներ գործադրվեցան։ Այն էլ չէք մոռացել, որ շատերը ուսուցիչներից ձրի էին դասախօսում և տեսուչն էլ ձրի տեսչութիւն անում։ Չը մոռանամ և այն՝ որ թուաբանութեան մէջ մեծ մեծ քայլեր էին անում, մանաւանդ օրիորդները...

Ինչու պէտք է անպատճառ անձնաւորութիւնները մէջ բերէք։—Դիցուք թէ պ. Եպիսկոպոսեանը անընդունակ էր և բոլորովին ապարդիւն ուսումնարանների համար. այդ կարող է լինել, ուրեմն պէտք է վճռվել, ուսումնարանից հեռանալ։

Եպիսկոպոսեանը այժմ չը կայ, նա այլ ևս տեսուչ չէ. ով է ձեր տեսուչը այժմ... կամ ում էք մտադիր հրավիրելու...—Այս հարցերը միթէ ձեզ համար նշանակութիւն չունեն։ Դուք ձեր անտարբերութեամբ և սառնասրտութեամբ աւելի ևս պարտականութիւններ էք դնում ձեր վրա. լաւ համոզված եղէք, որ մի օր ձեր որդիքը ձեր դէմ բողոք պէտք է բարձրացնեն։ Ի՞նչ պէտք է արդեօք նրանց պատասխանէք...Երաշխաւոր ենք, որ դուք նրանց կրթութեանը չէք վնասած, և ձեր առ որդիս ունեցած պարտականութիւնները կատարած էք։

Պէտք է նոր տեսուչ հրավիրել, նոր նոր ուսուցիչներ հրավիրել, դասատուններ աւելացնել և այսու փառաւոր ապագայ պատրաստել ձեր մատաղ զաւակների համար։ Ժլատութեան և եսամոլութեան քարը ծովը ձգեցէք և յետոյ բացէք ձեր գրպանները և առատապէս մատն և բաժին նուիրեցէք ձեր հարստութիւնից ուսումնարաններին։ Ազգային ուսումնարանը որբերի, աղքատների համար է զըլխաւորապէս, ուրեմն օգնեցէք, որ տառապեալ, չքաւոր մանուկները չը զրկվեն ուսումից։

Մ.

ՆԱՄԱԿ ՂԱՐՍԻՑ

5 սեպտեմբերի

Ամսիս 2-ին, կիրակի օրը Ղարսի հայոց եկեղեցում կատարվեցաւ հանդուցեալ գեներալ Լազարեվի հոգեհանգիստը, որի հետ միասին անմիջապէս և օրիորդաց դպրոցի բացման և օրհնութեան հանդէսը։ Այդ երկու միմեանց հակառակ՝ տխուր և ուրախալի հանդէսներին ներկայ էին որպէս Ղարսի բոլոր ժողովուրդը թէ ընկեր և թէ նորեկներ, նոյնպէս և Ղարսում գտնված քաղաքական և զինուորական աստիճանաւորներ թէ բարձր և թէ հասարակ կարգերից։ Ներկայ էր նաև Ղարսի կառավարիչ զինուորական նահանգապետ, գեներալ լեյտենանտ Ֆրանկինի։ Եկեղեցում և ուսումնարանում նորին սրբազնութեան Աղուանեանց եպիսկոպոսի պատշաճաւոր համառօտ ատենաբանութիւնից յետոյ, կարդացվեցան ճառեր տեսչի, վարժապետաց և այլ պաշտօնական անձանց կողմից. հանդէսը շատ չքեղ էր, թէև երկու միմեանց հակառակ տպաւորութիւններ էր պարունակում... Ղարսի նահանգապետ—գեներալը հոգեհանգստի կարգը աւարտելէն զկնի, հետևելով հանդիսակցաց՝ բարձրացաւ ուսումնարանի դահլիճը, որը զարդարված էր շատ փառաւոր կերպով. այստեղ նստելով իր համար յատուկ պատրաստած բազկաթոռի վրա, մի քանի երգից և ճառախօսութիւնից յետոյ, նայելով շուրջը վերկացաւ տեղից, թողեց հանդէսը և հանդիսականներին և ինքն միայնակ մեկնեցաւ ուսումնարանից։ Ահա հետևեալ օրը, այն է երկուշաբթի 3-ին ամսիս, մօտ ժամը տասին, մտաւ ուսումնարան պ. պոլիցիմէյստերը իւրայիններով, այն ինչ դասախօսում էին ուսուցիչները՝ և հրամայեց իսկոյն որ դուրս գնան ուսումնարանից և ուսումնարանը փակեն համաձայն նահանգապետի հրամանին։

***

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Աստրախան, 24 սեպտ.

«Մշակ» լրագրի 154 համարի ներքին տեսութեան մէջ մի նամակ կարդացի գրած Աստրախանէն 28 օգոստոսի երեք աստղանիշների ստորագրութեամբ, որով յօդուածագիրը ի միջի այլոց չօշափում է և իմ անձնականութիւնը առանց անունս յիշելու, ինձ անուանելով մի տաղանդեայ ապարդիւն պաշտօնավար Աստրախանու դպրոցաց։ Ես բարւոք համարեցի անպատասխան թողնել յօդուածագրին, արհամարհելով այն անխոհեմ գրիչը սակայն ամենասիրելի համազգայնոցս անտեղեակ չը թողնելով իմ տաղանդեայ ջանակուռ ձրի ծառայութեանց յօգուտ մտաւոր և բարոյական զարգացման ազգային երկսեռ զաւակաց, աւասիկ ուղարկում եմ խմբագրութեանդ այս նամակի հետը Աստրախանի հայ ժողովրդէն ինձ տուած կրկին գոհունակութեանց վկայագրերի հարազատ պատճէնները, որոնք անսուտ և անկողմնակալ վկայք են իմ արդիւնաւոր և անձնանուէր ձրի պաշտօնավարութեանց ազգային դպրոցաց մէջ, և խնդրում եմ ի սէր արդարութեան տպագրել «Մշակի» թերթերի մէջ յընդհանուր տեղեկութիւն համազգայնոց։ Իսկ այն նամակի միւս մասերի պատասխանները, որոնք չէն վերաբերվում իմ անձնականութեան թողնում եմ այն անձանց, որոնց վերաբերվում են։ «Բարձրապատիւ անդամոյ հոգաբարձութեան երկսեռ հոգևոր դպրոցաց հայոց Աստրախանայ, տեառն Յովսէփայ աւագ քահանայի Մակարեան Բունիաթեանց։ Հասարակութիւն հայոց ի ժողովի իւրում 30 աւուր յունիս ամսեան ներկայ ամի վասն ընտրութեան անդամոց հոգաբարձութեան երկսեռ հոգևոր դպրոցաց, նկատելով ի գործառնութիւնս նա կարգաւորեաց, թէ դուք բարձրապատիւ հայր՝ գոլով ընտրեալ ի թեմական հոգևոր իշխանութենէ անդամ հոգաբարձութեան վասն կառավարութեան յիշեալ դպրոցաց ի 1869 ամի, յօրէ յայնմանէ մինչև ցարդ ընթացս եօթն ամաց արդարութեամբ կատարելով զպաշտօն ձեր անդամոյ հոգաբարձութեան, ընդ նմին և զպաշտօն կրօնուսուցչի ձրիապէս, նուիրեցիք զանձն ձեր եռանդուն աշխատութեամբ կրթելոյ և լուսաւորելոյ զմանկունս ազգիս, բաց յայնմանէ հոգացիք վասն պահելոյ ճշդիւ զկարգ դպրոցական գումարաց, զհաշիւն յիւրումն ժամանակի մատուցեալ ի հոգաբարձութենէ ի կոնսիստորիայն և հասարակութեանս, զոր հաստատուն վկայ է ըզհաւատարիմ բարեխնամ անտեսական կառավարութեան դպրոցական գումարաց։ Վասնորոյ հասարակութիւն համաձայն մտաց համախօսականի իւրոյ, յօրինելոյ յ30 անցեալ յունիս ամսեան՝ սուրբ պարտականութիւն համարէ վասն իւր յայտնել այսու բարձրապատիւ հօրդ զիւր գոհունակութիւն, կցորդելով՝ թէ հասարակութիւն քաջայոյս է, որ դուք լցեալ բարի նախանձաւորութեամբ ոչ խնայեսջիք զանձն ձեր նոյնպիսի ջերմեռանդ աշխատութեամբ շարունակել զսուրբ պաշտօն ձեր վասն կրթութեան և լուսաւորութեան հայազգի մանկանց։ Ընդունեցէք բարեհաճութեամբ զգացողական անկեղծ մեր գոհունակութիւն, որով մընամք միշտ վասն ձեր բարեմաղթ անդամք հայոց հասարակութեան։» (37 ստորագրութիւններ)։ «Նորին բարձրապատուութեան եղեալ անդամոյ հոգաբարձութեան երկսեռ թեմական դպրոցաց հայոց Աստրախանայ և կրօնուսուցչի Յովսէփ աւագ քահանայի Բունիաթեանց։ Թէպէտ և հայոց ծխականք իւրեանց ժողովի մէջ 30 յունիսի 1876 ամի գրած երեսուն և վեց անձանց ստորագրութեամբ յայտնել էին ձերում բարձրապատուութեան իրանց գոհունակութիւնը ձեր ձրիապէս ծառայութեանց համար ազգային զաւակաց կրթութեան գործում, այլ որովհետև դուք զանց չառեցիք այն օրէն դարձեալ ջերմեռանդութեամբ շարունակել ձեր պաշտօնը, և լրացնելով տասնամեայ շրջանը ծառայութեան ուսումնարանների բացման օրէն, բոլորովին արձակվում էք ձեր սիրած ազգային պաշտօնէն համաձայն ձեր խնդրոյ տնօրէնութեամբ սրբազան առաջնորդի, որ կատարեցիք արդարև արդիւնաւորութեամբ և խղճմտանօք իբրև քահանայ և իբրև հոգևոր հայր ազգային զաւակաց, վասնորոյ հայկեան ժողովուրդը ախորժ պարտաւորութիւն է համարում յայտնել ձեզ խորին զգացմամբ իր գոհունակութիւնը, իբրև մարդկութեան և ազգութեան պետանի անդամոյ։ ի 20 մարտի 1879 ամի յԱստրախան։ (28 ստորագրութիւններ)»։

Յովսէփ աւագ քահանայ Բունիաթեանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Թիֆլիս, 25 սեպտեմբերի

Սեպտեմբերի 20-ին ճաշում էինք Թիֆլիսի հիւրանոցներից մէկի սեղանատանը։ Ես իմ ընկերներովս նստած էի մէկ սեղանի մօտ. մեզանից ոչ շատ հեռու նստած էր մէկ սեղանի մօտ միջահասակ մի մարդ, որ հայ էր։ Նա արդէն իրան համար ճաշը պատուիրել էր։ Մինչև նորա համար կերակուր բերելը, մտաւ և մի այլ հայ, որը նըստեց նոյն սեղանի մօտ, ուր նստած էր առաջվայ հայը։ Ողորմելին նստեց թէ չէ վերոյիշեալ պարոնը մի խորհրդաւոր հայեացք գցեց նոր եկողի վրա. հայեացք, որ արտայայտում էր նորա անբաւականութիւնը. միայն չէր կարելի ճշդիւ եզրափակել, թէ ինչ էր նորա այդ այցելութեան մէջ ձգում։ Մեր տարակուսութեան փարատելուն երկար սպասել չը տուեց խորհրդաւոր հայեացք գցողը. նա խելագարվածի նման յանկարծ ցատկեց տեղից և, կարծես կուզէր յանդիմանողական խօսքեր արձակել իր հանդէպ նստած պարոնի վրա։ Նա իսկոյն կայծակի նման հեռացաւ մի քանի քայլ իր տեղից ու նստեց մէկ օտարազգի պարոնի մօտ և սկսաւ խօսել։ «Այս հայերից ես զզուած եմ, այնքան զզուած եմ, որ ճանապարհին գալու ժամանակ մտածում էի, թէ արդեօք ճաշելիս հանդիպելուց զերծ մնալու եմ, թէ ոչ։ Բայց դժբաղդաբար պատահեց հայ և կարծես գիտութեամբ եկաւ իմ հանդէպս նստեց». իսկ իրան խօսակից պարոնը զուարճանում էր հայի ասած խօսքերի վրա և կարծես իր անսահման շնորհակալութիւնը կուզէր յայտնել նորա այդ ազգատեաց վարմունքի համար։ Ծառան բերեց կերակուրը և կուզէր դնել այն սեղանի վրա, որտեղ առաջ նստած էր ազգատեաց հայը. նա իսկոյն գոռաց ծառայի վրա թէ. «դու չէ՞ս տեսնում որտեղ եմ նստած՝ բեր այստեղ։»

Վերջապէս նա սկսաւ իր թիւնալից և տմարդի խօսակցութիւնը իր ընկերակցի հետ, այնպէս որ, կարծես, աւելի եռանդ և ինքնամոռացութեան էր տալի իրան, որ առիթ է ունեցել մի օտարազգի պարոնի ներկայութեամբ իր թոյնը դուրս ժայթքել։

—«Ի՞նչ միջոց գործ դնեմ, որ հայի չը պատահեմ։—Չէ որ դուք էլ հայ էք, ինչու հային ատում էք, ընդհակառակը, պէտք է դուք միշտ պաշտպան հանդիսանաք ձեր ազգին։—«Շատ դժգոհ եմ, որ հայ եմ ծնված և եթէ մի միջոց գիտենայի կը ցանկայի ուրանալ հայութիւնը, հայրենիքս, կրօնս...Բայց միայն իմ ուրանալով ինչ կը դառնայ. եթէ ուրանային բոլորը, բոլոր հայութիւնը, այն ժամանակ շատ լաւ կը լինէր ինձպէսների համար և հայութեան անունը կանհետանար երկրագնտի երեսից. բայց երևում է որ, չատ դժուար կը թառամի այս ազգի արմատը։» Նա սկսեց բամբասել, հայերի վրա չարախօսել, անարգել, ամենայն բան թարս կողմից ցոյց տալ, թէ ագահ են, գողող են, իրանց չեն ճանաչում. «նոքա կարծում են, թէ շատ խելք են և շատ արդիւնաբեր ազգերից մէկն են. հետերը խօսես իրանց անցեալ զզուալի պատմութիւնը կանեն, իրական փաստեր առաջ կը բերեն, որ երբեմն եղել են պատմական ազգ, որ նոքա կրել են ամեն տեսակ նեղութիւններ և հալածանքներ իրանց ազգութիւնը պահպանելու համար, և օր աւուր կը զօրանան։ Բայց նոքա չեն կարծում, որ ուրիշ ոչինչ չեն, եթէ ոչ մի թշուառ և չահասէր ազգ, որ վաղ թէ ուշ, յոյս ունեմ, չեն ունենայ գոյութիւն, հիմք, հաստատութիւն և կեանք։»

Արդեօք այժմ, 1879 թուականին, 19-երորդ դարու վերջերը կարելի է այդպիսի մի յանդուգն հրէշի հանդիպել, հրէշի, որ ազգութիւն, հայրենիք, լեզու, կրօն ասած սրբազան բաները մոռանում, քարկոծում է։

Յարութիւն Ասլի-Բէգեանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Շուշի, 25 սեպտեմբերի

Ընդ նամակաւս ներփակեալ ուղարկում եմ ձեզ մի ծրարի մէջ մէկ հարիւր երեսուն և հինգ ռուբլի, որ հաւաքած ունեմ իմ բարեկամներից յօգուտ «Արարատեան ընկերութեան». կը խնդրեմ հասուցանել ուր հարկն է, փոստայի ծախքը ինձանից է տուած։ Ահա նուիրատուների ցուցակը։

Նիկոլայ Բաղտասարեանց 15 ր. Դանիէլ Ահարոնեաց 15 ր., Խաչակ Թադէոսեանց 15 ր., Յարութիւն Աղամեանց 15 ր., բժիշկ Մովսէս Ամաբէկեանց 25 ր., Թալիշ Բէկ Դոլուխանեանց 10 ր., Խաչատուր Մէլիք-Դատայեանց 10 ր., Թէոդորոս Խանդամեանց 15 ր., և Մինաս Խունունց 15 ր։ Ընդ ամենը 135 ր։

Մինաս Խունունց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Կ. Պոլիս, Քաղկեդոն, 30 սեպ.

Ձեր ազգասիրութեան համբաւը մինչև հոս մեր ականջը հասած է։ Եղբայրս Տփխիս գտնված ժամանակը ձեզ հետ տեսնվելով ձեր գովելի հանգամանքները մեզի ծանուցած է, որով կը համարձակիմ երկտող գրով բուն նամակիս նպատակը ձեզ յայտնելու։

Հայուհեաց Ազգանուէր անունով ընկերութիւն մը կազմեցաւ Կ. Պոլիս Իւսկիւտար գեղին մէջ. այս ընկերութեան բուն փափաքն է Հայաստանի մէջ գտնվող խեղճ հայ աղջկանց ուսմունք սորվեցնել։ Այս ընկերութիւնը արդ օրէ օր տարածվելու վրայէ և ամեն գիւղերու մէջ ճիւղեր ունի, մասնաժողովներ կը կազմէ։

Արդ, մեծապատիւ տէր, ձեզի կաղաչեմ որ բարեհաճիք Տփխիսի հայ տիկնայց և օրիորդաց այս ընկերութեան վախճանը ծանուցանելով բաժին տալու զիրենք համոզելու ջանայիք. աւելորդ սեպելով մանրամասնաբար տեղեկութիւններ գրել ընկերութեանս վրայօք, կը խրկեմ ձեզի կանոնագիր մը, ուսկից կատարեալ տեղեկութիւն մը կըստանաք։ Եթէ նամակ գրելու ըլլաք, չնորհ ըրէք այսպէս գրելու. «Constantinople, Galata, Crédit Lyonnais, Antoine Billorian։» Եթէ խնդիրս հաճելի ըլլայ ձեզի, երկտող նամակով մը ինձի իմացուցէք ձեր հաճութիւնը, որ ես իսկ տոմակները և նամակներ ձեզի ուղղեմ։

Մարիամ Ա. Պիլորեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Թիֆլիս, 2 հոկտ.

Ձեր լրագիրը իր վերջին համարներից մէկում մի հայեացք գցելով իր այրքան տարվայ աշխատանաց արդիւնքի վրա գոգցես մի տեսակ անյուսական եղանակով գանգատում է իբր թէ մեր ազգի թերութիւնքը երևան հանելով զրկվել է ոմանց կասկածելի համակրութիւնից և յարուցել է իր դէմ ոմանց և նոյն իսկ շատերի ոխը և ատելութիւնը։ Ներեցէք որ յանդգնում եմ անձնական դաղափարները ձեզ հաղորդել, թէև մասամբ անարժեքի ևս թուին ձեզ։ Բնաւ մի կարծէք թէ «Մշակը» ազգի մէջ թշնամութիւն և եթ գրգռած

լինի առ ինքն այն յօդուածներովը և գրութիւններովը որոնք յանդիմանում են մեզ մեր այլ և այլ բարոյական ախտերի աղագաւ։ Ճշմարիտն ասելով «Մշակի էջերում լինձ համար ամենից սիրելի մասերը միմիայն այն ուղղութեամբ և այն հոգով գրվածքներն էին և են։ Ուրեմն իմ անձնական խորին յարգանքս նուիրում եմ հրապարակաւ թէ ձեզ թէ ձեր Նոր-Նախիջևանից, Մոսկվայից և այլուստ սրալեզու թղթակիցներին որ անմոռուչ աչքով ազգիս արատներն ու վէրքերը տեսնելով նրան դարման տանելու անխնայ անկեղծութեամբ բուժել և բարոյել են ջանում։ Գերմանացի իմաստասէր բանաստեղծ Հէրդէրն ասաց թէ, Eins nur wagen wir nicht, reinaus zu sagen die Wahrheit. Weihrauch liebet man wohl, aber kein würziges Salz. Մարդիկ և նա մանաւանդ մտաւոր կենաց ստոր աստիճանների վրա եղող ազգերն ու անձերը աւելի սիրում են դրուատանաց անուշահոտ խունկի բուրմունքը, քան թէ իրանց ախտացեալ բնութեան վէրքերի վրա ածած կծու աղի մորմոքումը։ Ամեն հին և նոր ազգի լաւերը երբ որ նկատել են իրանց ազգակիցների մէջ ընդհանրութեան վնաս բերող երևոյթներ, սկսել են վառված և վրդովված մինչև իրանց հոգու խորքերը՝ ամենուժգին լեզու բանացնել չարեաց առաջն առնելու համար, և ոչ սակաւ անգամ պակվել են նրանց աշխատանքը արդիւնքով եթէ ոչ նրանց օրերին, բայց գոնեա նրանց մահից յետոյ։ Եւ լաւ ազգերը ինչպէս նաև լաւ անձերը միշտ պատրաստ և չնորհակալ են իրանց պատկերը անաչառ հայելի մէջ տեսնել, որպէս զի արդարակշիռ քննադատի (կրիտիկայի) դատաստանը լսելով, կարողանան նրա պարսաւանքից օգուտ քաղել և իրանց վարքը բարւոքել։ Ահա օրինակի համար գրեմ այստեղ արձակ ոճով Բիւքքէրտի մի աղնիւ ոգևորված բանաստեղծութեան մի կտորը, որ ուղղել էր նա առ գերմանացիս։

«Ո՛վ դուք, որոնք երկինք սահմանեց՝ իբրև ճրագունք լուսաւորել նրանց, որ խարխափում են խաւարում, որքան էք դուք այսպէս ձեր պաշտօնը չարաչար գործածել, դուք դէպք, քննիչք, դըպիրք, երգիչք։—Ամեն ուժի սպառիչ՝ ծոյլ թմրութեան մէջ մրրափած տեսնում էք ձեր ազգը եղբարք խպառասպուռ խոր ընկղմած փոխանակ զարթեցնելու ձեր ձայնովը՝ դուք ինքներդ օրօրում էք էլ աւելի ունայնամիտ փուճ ցնորքով. մեր կարիքը մէկ հատ է. արթնանանք մաքառելու։ Դուք թէ որ ըմբիշների թիւն աճեցնել չէք փափաքում, գոնէ և մի նուազեցնէք ձեր քնարի ճրռճրռոցով։ Հանում է արդեօք ձեր վայրենօս ձայնը Լիւն։ Թող հանէ, որ նա ջարդէ, փշռէ ձեր քնարն ու ակռաներն, որպէս զի, ով չաղակրատք, յաւէտ և ընդ միշտ պապանձուիք։»

Այդ գերմանացի բանաստեղծը իր ազգի վատութիւնը նրա երևոյթն է տալիս անխնայ՝ այսպիսի խօսքերն ասելով. «Երինք թէ որ կարենային, կը գոռային կը պոռային. մեք անզգայ մէջքով վաղուց սկսանք զգալ ձեր թշնամաց սմբակների ծանր կշիռն։ Քարի համբերն պայթում տրաքում է վերջապէս, որին Աստուած ոտքի կոխան է ստեղծել—ով դու, քարից առաւել ազգ, մինչև երբ պէտք է քեզ կոխ տալ։» Ուրեմն հաւատի եղէք, պարոն խմբագիր, որ մեր ցաւը ճանաչելը, մեր ցաւի անունը լսելը, մեր ցաւի դարմանը իմանալը մեզ շատ հաճելի է մեր ազգակցի բերանից քան թէ մեզ չը սիրող ազգերի բերանից նախատական բառեր և մականուններ լսելը։

***

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

ԳԱՆՁԱԿԻՑ մեզ գրում են. «Յորդ անձրևներից յետոյ սկսվել է մեղմ եղանակ։ Այս տարի խաղողի առատութեանը չափ չը կար, բայց անձրևները համարեա կէս արին խաղողը։ Մթերքները թանդ են։ Հիւանդութիւններ քաղաքի մէջ չատ կան։»

—

Մեզ հաղորդում են ԱՍՏՐԱԽԱՆԻՑ, որ անցեալ սեպտեմբերի 16-ին այնտեղի Աստուածամօր եկեղեցում հայ հասարակութիւնը կատարել է հանգուցեալ գեներալ Լազարեանի հոգեհանդիստ։

—

Հինգշաբթի, հոկտեմբերի 4-ին հայ դերասանական մշական խումբը ԹԻՖԼԻՍԻ Ամարյան թատրոնում ներկայացրեց «Հէնրի VIII» դրամա 5 արարուածով, հեղ. Ա. Դիւմայի։ Հինգշաբթի հոկտեմբերի 11-ին նոյն խումբը կը ներկայացնէ «Փարիզի աղքատներ», թարգ. Ֆրանսիերէնից։

—

Մեզ հաղորդում են ԱՍՏՐԱԽԱՆԻՑ, որ այնտեղի կլուբի դահլիճում երիտասարդ հայ երաժիշտ Զիժեանը մի կօնցերտ է տուել։ Զիժեանը ածում է ջութակի վրա. նա մի ժամանակ Ապօլինարի Կօնտսկու աշակերտ է եղել։

—

ԱԽԱԼՑԽԱՅԻՑ մեզ հաղորդում են, որ տեղացի մի քանի հայ մանուկներ դպրութիւն են անում այնտեղի ռուսաց եկեղեցում։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿԱՆՈՆԱԳԻՐ ՀԱՅՈՒՀԵԱՅ ԱԶԳԱՆՈՒԷՐ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ Կ. ՊՕԼՍԻ ՄԷՋ

—

1.—Ազգանուէր ընկերութեանս նպատակն է Հայազգի իգական սեռի դաստիարակութեան օգնել։

2.—Ընկերութիւնս ունի երկու ժողով. մին Ընդհանուր և միւսն Գործադիր։

3.—Ընդհանուր ժողովն որ կը բաղկանայ ամեն ընկերուհիներէ, երեք ամիսն մի անգամ կը գումարի որոշեալ տեղ մը, և կը լսէ գործադիր ժողովոյ պաշտօնավարութեան եռամսեայ տեղեկագիրը. կը քննէ և կը հաստատէ հասոյթներն ու ծախքերը, և ընկերութեան նպատակին հասնելու միջոցները կը տնօրինէ և կը յանձնարարէ Գործադիր ժողովոյ զանոնք ի գործ դնել։

4.—Ընդհ. ժողովն յարտաքոյ կարգի նիստ ալ կը հրաւիրուի, երբ իւր Դիւանն կամ գործադիր ժողովն հարկ դատի։

5.—Հրաւիրագիրն կը ստորագրուի ի Դիւանէ, յորում կը նշանակուին օրն ու տեղը և օրակարգի խնդիրները։

6.—Ընդհ. ժողովն ատեան կը բանայ երբ ընկերուհեաց թուոյն մէկ չորրորդը ներկայ ըլլայ. բացակայք կրնան իրենց դիտողութիւնները գրով հաղորդել ժողովին, բայց նրա որոշմանց դէմ բողոքելու իրաւունք չունին։

7.—Ընդհ. ժողովոյ դիւանը կը բաղկանայ երեք ատենապետէ և երեք ատենադպրէ, որք մէկ տարուան համար կընտրուին և վերընտրելի են։

8.—Ամեն նոր Ընկերուհի՝ կամ Գործադիր ժողովոյ և կամ դէթ երկու ընկերուհեաց միջոցաւ կը ներկայանայ Ընդ ժողովոյ հաւանութեանը։

9.—Գործադիր ժողովը կը բաղկանայ մէկ ատենապետէ, երկու ատենադպրէ, երկու դանձապետէ և երկու համարակալէ, որք սոյն պաշտօններով կընտրուին Ընդհ. ժողովէն։

10.—Գործադիր ժողովոյ պաշտօնն է թէ ամսական բաժնեգինները և թէ նուէրները հաւաքել, Ընդհ. ժողովոյ որոշած ծախքերն ընել, Ընկերութեան զարգացմանն և նպատակին վերաբերեալ աշխատութիւն ու փոյթը տանիլ։

11.—Գործադիր ժողովոյ նիստերուն կրնայ ներկայ գտնուիլ ամեն Ընկերուհի երբ կամի, բայց քուէ չունի։

12.—Ամեն Ընկերուհի պարտական է զէթ մի ամսական բաժնեգին վճարել։

13.—Ամսական բաժնեգինն է մէկ դահեկան արծաթ։

14.—Ով որ եթէ կամի բաժանորդ կրնայ ընդունուիլ, ամսական զէթ մէկ բաժնեգին վճարելու պայմանաւ. բաժանորդք իրաւունք չունին ընկերութեան գործոց միջամտել, այլ նորա տարեկան գործոց տեղեկագիրը կը ստանան։

15.—Թէ ընկերուհիք, թէ բաժանորդուհիք և թէ այլ ազգասէր անձինք կրնան ձեռագործներ ևս նուիրել, զորս վիճակահանութեան դնելով արդիւնաւորելու հոգ պիտի տանի Գործադիր ժողովն։

16.—Բացի ձեռագործներէ դպրոցական և այլ նուէրներ ալ կընդունի ընկերութիւնս, և այս ամեն նուիրատուաց անուանքը օրագիրներու միջոցաւ Ազգին կը ծանուցանէ։

17.—Սոյն Կանոնագիրը վերաքննելի է երբ Ընդհ. ժողովն հարկ դատի։

ԱՆԳԼԻԱ

—

Լրագիրները հաղորդում են, որ Ֆրանսիական նախկին կայսրուհի Էօժէնի, իր որդու մահուանից յետոյ, առաջին անգամ դուրս եկաւ Շիզլհուրստից։ Սևազգեստ ու սև քողով ծածկված, նա մեծ դժուարութեամբ էր մօտենում իր համար առանձին պատրաստված շօսլանդական վագոնին։ Բաստանս դուքսը օրիորդ Լարմինատ և մի երկու ծառայ նրան կուղեկցեն մինչև Արէրժէլդի։ Պ. Պիէտրի կայսրուհու մի առանձին յանձնարարութեամբ ուղևորվում է Փարիզ։

Վերջին օրերս Լօնդօնում Անգլիայի համար մի աղետալի լուր ստացվեցաւ Հնդկաստանից։ Գելլայ կոչված անկախ ցեղի առաջնորդները, թոյլ տալով, որ գեներալ Բօբէրտսի զօրաբաժինը մտնի Շատուրգարդանի անցքը, յանկարծ շրջակայ սարերից թափվեցին նրանց վրա, և երկու անգամ սկսվեցաւ ճակատամարտը, առաջին անգամ անգլիացիք յաջողացրին յետ մղել թշնամուն, բայց երկրորդ անգամին գիլզաները յաջող դիրք բռնելով կարողացան բոլորովին պաշարել անգլիական զօրաբաժինը։ Այժմ գեներալ Բօբէրտսի զօրաբաժնի և անգլիական գլխաւոր բանակի մէջ բոլոր յարաբերութիւնները կտրված են։

Շատերը յոյսը կտրել են, որ գեներալ Բօբէրտս կարողանայ կրկին ողջ և առողջ վերադառնալ գլխաւոր բանակը, չը նայելով, որ դրա համար ահագին պատրաստութիւններ են տեսնվում և անգլիացիք այժմ մտածում են միջոցներ գտնել բարձրանալ սարերի վրա, և իրանց կարգին պաշարել գիլզաներին. եթէ այդ մտադրութիւնը յաջողի անգլիացիներին որ չափազանց անհաւանական է, այն ժամանակ աջգանական քաջերը երկու կողմից էլ պաշարված կը լինեն անգլիացիներից. սարերի բարձրութիւնների վրա զետեղված կը լինեն անգլիական գլխաւոր բանակի զօրքերը, իսկ կրճի մէջ կը լինեն Բօբէրտսի զօրքերը։ Բայց ինչպէս որ առաջ էլ ասացինք, դժուար թէ անգլիացիներին յաջողի մի այդպիսի յանդուգն մտադրութիւն, որովհետև Շատուրդարդանի բարձրադաթի լեռները բոլորովին անմատչելի են, և նրանց վրա կարող է մագլցելով բարձրանալ միայն գիլզայը, այդ նուիրական սարերի հարազատ զաւակը, որը երեխայութիւնից սկսած այդ ժայռերի վրա սովորել է վայրի այծերի նման մի ժայռից դէպի միւսը մագլցել։

Անգլիայի աֆրիկական պատերազմի մասին այլ ևս լուրեր չը կան. այդտեղի պատերազմը, գոնէ ըստ երևութին վերջացած է համարվում, և զօրքերը հետզհետէ Անգլիա են վերադառնում։ Պօրտսմուտում ժողովուրդը ամենաեռանդուն ընդունելութիւններ է անում իր քաջ զինուորներին, նրանց ծաղիկներով ու դափնիներով են պսակում կարծես թէ այդ զօրքերը, Աֆրիկայի մի խոր անկիւնում թափելով անկախութիւն սիրող մի ժողովրդի անմեղ արիւնը, և նրան ստրկական անարգ վիճակին ենթարկելով, այդպէսով նրանք հերոսներ են դարձել։

Բրիտանիայի դէպի Աֆրիկան ունեցած անսահման սէրը հետզհետէ աւելի ու աւելի է կրկնապատկվում։ Բրիտանիան չը կշտանալով ամբողջ Բարեյուսոյ հրուանդանից, Կապտօնից, Նատալից, Աշանդիների երկրից, և վերջապէս, այո, կարող ենք համարձակ ասել Եգիպտոսից, նա այժմ իր խորամանկ մագիլները մեկնել է դէպի Հաբէշիստան, և այդ երկրի թագաւորի հետ Բրիտանիան արդէն ջերմ բարեկամական յարաբերութիւններ է սկսել։

Հաբէշիստանը չէ իմանում, որ իր կարիքների ու նեղոսեան կրոկոդիլոսների բարեկամութիւնն աւելի քիչ վտանգաւոր է, քան թէ Անգլիայի թունաւոր բարեկամութիւնը։

Կայիրէի բրիտանական դեսպանը հրահանգներ է ստացել իր կառավարութիւնից, որ նա ներկայացնէ Հաբէշիստանի թագաւորին Բրիտանիայի ջերմ համակրութիւնն ու Անգլիայի երաշխաւորութիւնը, որ անպատճառ շուտով կը վերահաստատվեն Եգիպտոսի ու Հաբէշիստանի նախկին բարեկամական յարաբերութիւնները, որից անշուշտ Անգլիան չի մոռանայ քաղել իր օգուտը։

ԲՈԼԳԱՐԻԱ

—

Այն միջազգային մանաժողովը, որ զբաղված էր Բոլգարիայի և Ռումելիայի սահմանագիծը որոշելով, այս օրերս վերջացրեց իր յանձնարարութիւնը։

Քաղաքական սահմանագիծը, յանձնաժողովի որոշման համեմատ անցնում է Թաթար-Բազարջիկի, Սամակօվի և Դուբնիցայի վրայով. այդ տեղից գիծը տարածվում է մինչև Կիւստէնջի, որտեղ Դուբնիցան բաժանում է Ցէննայից։

ԻՏԱԼԻԱ

—

Սէնատոր Պալմիէրի սեպտեմբերի 28-ին հաղորդել է Նէապոլի լրագիրներին հետևեալ տեղեկութիւնը Վէզուվի վիժման վերաբերութեամբ։

«Վերջին գիշերը Վեզուվը նորից սկսեց ներգործել, և լաւան սկսեց վիժել դէպի այն կողմը, որ նայում է Պօմպէյին և Օտտաջանոին։ Լաւայի գլխաւոր հոսանքը, որ 5 մէտր լայնութիւն ունի, կանգնեց լեռան ստորոտում։ Ոչ մի նշան ցոյց չէ տալի, որ վիժումը կարողանայ աճել։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Ինչպէս «Голосъ» լրագրում կարդում ենք, այժմ Ս. Պետերբուրգում կանանց արհեստագործական (պրոֆէսիօնալ) ուսումնարանների հարցը օրվայ հարց է դարձել։ Թէ մասնաւոր ժողովներում և թէ տեխնիկական ընկերութեան յանձնաժողովի նիստերում խօսվում է այդ տեսակ ուսումնարանների իրագործման մասին, բայց մինչդեռ այդ նիստերում քննում ու խորհրդակցում են այդ հարցի մասին, մի մասնաւոր անձն արդէն իրագործել է այդ միտքը։ Հոկտեմբերի 1-ին ներկայ 1879 թվի բացվեցաւ մի մասնաւոր արհեստագործական ուսումնարան։ Այդ ուսումնարանի նպատակն է պատրաստել ձեռագործի վարժուհիներ, կարանոցներ, ձևողներ, գրագրներ, առևտրական գործակատար կանայք և այլն։ Ընդունվում են ամեն դասակարգի կանայք 12 տարեկան հասակից սկսած։ Պարապմունքի առարկաներն են՝ չորերի և սպիտակեղէնների ձևելը և կարելը, զանազան ձեռագործ և մեքենակար, կանանց զբաղարկների, արուեստական ծաղիկների պատրաստելը և այլն։ Ուսման ընթացքը տևում է 4 տարի։ Փոքրերը որոնք դեռ ևս ոչինչ չը գիտեն, վճարում են տարեկան 30 ռուբլի։ Ուսումնարանը ընդունում է պատուէրներ և ստացած գումարից 20% հանելով յօգուտ ուսումնարանի, մնացածը ստանում են աշակերտուհիները։ Ուսումնարանը դիտաւորութիւն ունի մօտակայ ժամանակում բացանել ընդհանուր կրթողական դասատներ, որի համար թոյլտուութիւն արդէն ստացել է։

***

Կրկին հեռագիրներ չը ստացանք «Միջազգային Ընկերութենից», այնպէս որ «Մշակի» ներկայ համարը հրատարակում ենք առանց հեռագիրների։

Խմբագիր—Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ւ Ն Ն Ե Ր

ԶԱՔ. ԳՐԻԳՈՐԵԱՆՑԻ «ԿՈՎԿԱՍԵԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑԸ» ստացել է

1 Սրուանձտեանց-ԹՈՐՈՍ ԱՂԲԱՐ 1 ր. 25 կ.
2 Ս. Մանդինեանց-ԿՐՕՆՔ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՀԵՏԱԶՕՏՈՒԹԻՒՆ 1 ր. —
3 Բժիշկ Ա. Բաբայեանց ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ 1 ր. —
4 Ա. Բահաթրեանց - ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԱՇԽԱՐՀԻԿ ԼԵԶՈՒԻ — 25 կ.
5 Երկաթէ ԴԻՄԱԿՈՎ ՄԱՐԴԸ ԵՒ ԱՒԵՏԻՔ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՅՈՑ 1 ր. —
6 Ց. Շիշմանեանի - ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆՑ ՀԱՒԱՔՈՒՄՆ Ա. 1 ր. 15 կ.
7 Փարոս 1879 — — — - թ. 1 ր. —

ՆԻԿՈՂԱՅՈՍ ՏԷՐ-ՂԵՒՈՆԴԵԱՆԸ խնդրում է այն անձանց, որոնք իրան հետ գրագրութիւն ունէին, այսուհետև իրանց մասնաւոր նամակներն ուղղել դէպի Երևան, ուր նա այս տարի պիտի մնայ ուսուցչական պաշտօնով, իսկ պատուէրները բատ առաջնոյն թող ուղղեն Կենտրոնական գրավաճառանոց, ուր ինքը պահպանում է իւր մասնակցութիւնը: Երևան քաղաքի և նորա շրջակաների ուսումնարանների վարչութիւնները դիւրութեան համար, իրանց դրամաւոր պատուէրները կարող են ուղղել նոյնպէս և դէպի պ. Տէր Ղևոնդեանը, որը կաշխատի ամենայն արագութեամբ կատարումն տալ նոցա պահանջներին: Յետոյ վճարելու պայմանով գրքեր ցանկացողները դիմում են ուղղակի գրավաճառանոց:

2—3

ՎԱՃԱՌՔ ԷԺԱՆ ԳՆԵՐՈՎ

ԳՕԼՕՎԻՆՍԿԻ ՊՐՕՍՊԵԿՏԻ ՎՐԱ, ՇԻՕԵՎԻ ՏԱՆԸ, պ. Միրզոյեվի ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ՀԱՆԴԻՍՈՒՄ, Լուսանկար Վեստլի կարգին, ԿԻՐԱԿԻ ՆԵՐԿԱՅ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 30-ից բռնկված ԵԿՈՂ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ ամբողջ ամսվայ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԾԱԽՎԵԼՈՒ են 250-ից աւելի ՁԻԹԱՒՈՐ ՊԱՏԿԵՐՆԵՐ զանազան մեծութեան, ամէն տեսակ բովանդակութիւնների (չը բացառելով և կրօնականները, որոնք պիտանի են եկեղեցիների համար:) ՊԱՏԿԵՐՆԵՐԸ ՆԵՐԿԱՅԻ ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ԱՐՀԵՍՏԱՒՈՐՆԵՐԻՆ ԵՆ և դրված են հարուստ ոսկեզօծած մաքուր շրջանակների մէջ: ՄՈՒՏՔԸ ԱՆՎՃԱՐ Է: Նոյեմբերի 1-ից յետոյ վաճառքը կը դադարեցնվի, որովհետև մնացած պատկերները կուղարկվեն:

8—10

ՁԻՒԹԱՅԻՆ ՊԱՏԻՃՆԵՐ

ՆՕՐՎԷԳԻԱՅԻ ՄԱՔՐԱԾ ՁԻՒԹԻՑ, որ պատրաստված է Մոսկվայի դեղագործ

ԳԻՐՇՖԵԼԴՏԻՑ

Գիւցի Փրանսիական յայտնի պատիճների անհամեմատ թանգ գները դրդեցին ինձ պարապել նրանց արդիւնագործութեամբ և որովհետև պատիճների պատրաստելը գաղտնիք չէ և նրանք իրանց մէջ ոչինչ չեն պարունակում, բացի մաքուր Ձիւթից, ես առաջարկում եմ իմ շատ լաւ պատրաստված պատիճները ՓՐԱՆՍԻԱԿԱՆ (ԳԻՒՕՅԻ) ՊԱՏԻՃՆԵՐԻՑ 40% էժան:

Յոյս ունեմ, որ ռուս բժիշկները և հասարակութիւնը խելացի կերպով կը վերաբերվեն դէպի իմ աշխատանքը, որովհետև նորա ամիթ չունեն ռուսաց փողերով պահպանել ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԱՐԴԻՒՆԱԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ:

Ծախելու տեղերը. Ռուսաստանի բոլոր դեղատուները և տեղական պահեստները: Գլխաւոր պահեստները. Մոսկվայում, Լուբեանսկի դեղատուն Էդ. Ի. Գիրշֆելդտի և Բ. Կեօլեր և ընկ. Նիկոլսկիի վրա: Թիֆլիսում Ցուրինօվի և Բոստոմծի դեղատուն:

18—25

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱԳԼՈՒԽԸ յայտնելով, որ ներկայ հոկտեմբերի 9-ին հանելու Թիֆլիս ԲԱՐՁՐԱԳՈՅՆ հաստատված ՑԱՆՑՆԱԺՈՂՈՎԸ ՓՕԹԻ-ԹԻՖԼԻՍԵԱՆ երկաթուղին նախելու, ձանապարհորդներից և ապրանքներ ուղարկողներից ԳՐԱՒՈՐ և ԲԵՐԱՆԱՑԻ ՑԱՅՏՆՈՒԹԻՒՆՆԵՐ ընդունելու համար այն ԱՆՅԱՐՄԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ մասին, որոնք պատահում են Փօթի-Թիֆլիսեան երկաթուղու վրա, Թիֆլիսի Քաղաքագլուխը հարկաւոր է համարում աւելացնել, որ այն անձինք, որոնք ԿԸ ԴԺՈՒԱՐԱՆԱՆ այդպիսի բերանացի կամ գրաւոր յայտնութիւններ ՈՒՂՂԱԿԻ յանձնաժողովին հասցնել, կարող են ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆԸ ներկայացնել, որը իր կողմից գործին ընթացք կը տայ:

1—3

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Դուրս եկաւ ԶԱՔ. ԳՐԻԳՈՐԵԱՆՑԻ ԿՈՎԿԱՍԵԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՄԲ «Ծ ե ր ե ն ց ի - ԵՐԿՈՒՆՔ ԻՆՆԵՐՈՐԴ ԴԱՐՈՒ.» վերնագրով — Թ ո ր ո ս Լ և ո ն ի հեղինակի նոր աշխատասիրութիւնը:

ԳԻՆՆ Է ԱՄԷՆ ՏԵՂ ՄԻ ՌՈՒԲԼԻ: Ա յ ս օ ր ե ր ս մ ա մ ո ւ լ ի տ ա կ կ ը ն կ ն ի պ. Հ. Ղուկասեանցի աշխատասիրած ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ հին դարը Զաք. Գրիգորեանցի հրատարակութեամբ:

5—5

Вышла въ нѣмецкомъ переводѣ г. А. Амирханянца лекція Григорія Арцруни «Объ экономическомъ положеніи армянъ въ Турціи.» Цѣна брошюры 25 копѣекъ

5—5

ԾԱԽՎՈՒՄ Է ԵՐԵՒԱՆՈՒՄ «ԳՈՒՐՋԻ» անուանված քարվանսարան, որ ունի 116 ԴՈՒՔԱՆ, 2 մեծ ՄԱԳԱԶԻՆ պահեստի համար, 2 ԱԽՈՌԱՆՈՑ, 2 ՍԵՆՆԵԱԿՆԵՐ խոհանոցով և մեծ ԱՒԱԶԱՆ միշտական ջրով: Սորա հետ ունի նմանապէս ԴԱՏԱՐԿ ՏԵՂ 4000 քառակուսի սաժէն: Ցանկացողները ՊԱՅՄԱՆՆԵՐԻ մասին կարող են դիմել Պ. ԲԱՂԴԱՍԱՐ ԽՈՍՐՈՎԵԱՆՑԻՆ, Թիֆլիսում, Գանովսկայա փողոցի վրա, ՍԵՓԱԿԱՆ ՏԱՆԸ:

18—20 (2)

Անմխիթար ԳԱԲՐԻԷԼԵԱՆ և Նինա Գրիգորեան ՏԷՐ-ՂԱԶԱՐԵԱՆՑ ցաւօք սրտի յայտնում են իրանց ազգականներին և ծանօթներին, որ առաջինի որդին և երկրորդի ամուսինը՝ ՅՈՎԱԿԻՄ ԱՒԵՏԻՍԵԱՆ ՏԷՐ-ՂԱԶԱՐԵԱՆՑ վախճանվեցաւ ամսիս 1-ին: Յուղարկաւորութիւնը հանգուցեալի կը լինի ՇԱԲԱԹ ՕՐԸ, ամսիս 6-ին ժամը 10-ին առաւօտեան իր սեփական տանից Սօլօլակում, Բոլնիչնայա փողոցի վրա, ՄՈՂՆՈՒ սրբ. Գէորգի եկեղեցին:

2—2

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 6 — Տ Ե Ղ Ե Կ Ա Ց Ո Ց — ԹԻՖԼԻՍ 1879

ԹԻՖԼԻՍԻ ՎԱՃԱՌԱՆՈՑ (Հոկտեմբերի 5-ին)

ԹԻՖԼԻՍԻ ՎԱՃԱՌԱՆՈՑ	Ր.	Կ.
Ոսկին (պօլուիմպերիալը)	8	15
Հին 84 պր. մ. արծ. 1000 մ.	1420	—
Հին 20 կ. 72 պր. 1000 »	1245	—
Վիգրէնի 5% առաջի փոխառութեան տոմ. 100 »	235	—
Երկրորդ 5% վիգրէնի »	230	—
Մարսէլի կուրսը 270—	100	—
Լօնդօնի կուրսը Օդեսայի վրա	9	45
Վիեննայի կուրսը արժէ 121 գլ.	100	—
Դուբեծի բարաթը	4	80
Առևտրական բանկի ակցիան 200 մ.	310	—
Փօթի Թիֆլիսեան երկաթուղու ակցիան 125 մ.	—	—
Շաքարը բրօցկու	7	30
» միւս տեսակը	7	15
» շաքար աւազը	5	30
» տրանզիտը	5	30
» մաքուր փճառած	10	—
Բամբակը Երևանու Ամերիկայի սերմից	8	—
Միւս տեսակը հին սերմից	7	40
Բուրդը Թուշի	7	50
» Թարաքամի	4	—
Ալիւրը Շորագալու	2	20
» Երևանի	—	—
Գարին	1	40
Մոմը բնաճարպի (стеар.)	12	40
Մետաքսը Նուխվայ	180	—
Կախեթունը	140	—
Կոկոնը Նուխվայ (բոժ.)	50	—
Ցրիզոնը (լասը) Ագուլեաց	65	—
Կօֆէն մոկօր	26	—
« լիւանի	22	—
« Մանտ ինիյօն	18	—

ՀԵՌԱԳԻՐ

	Ր.	Կ.
Կովկասի և Անդրկովկասի քաղաքները	1	
Ռուսաստան	2	
Աւստրիա	3	
Անգլիա	4	
Գերմանիա	2	88
Ֆրանսիա	3	75

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ՄԱՆԿԱԲԱՐՁԱԿԱՆ ԴՊՐՈՑ

(Վէրայի վրա № 38)

Ծնողականների ընդունելութիւնը ցերեկվա և գիշերվայ ամեն ժամանակ, օրը 50 կօպէկ վարձով, իսկ չքաւորներին անվարձ: Առանձին սենեակներում ամիսը 30—50 րուբլ: Կանանց հիւանդութիւնների բաժանմունքի մէջ վարձը ընդհանուր սենեակում 18 րուբլ, իսկ մասնաւոր սենեակներում 30 րուբլ ամսական:

Երթևեկ հիւանդ կանանց և երեխաների ընդունելութիւնը ամեն օր, բացի կիրակի օրերից, 9½ մինչև 11 ժամ առաւօտեան, Բժշկապետ Անանով:

ՓՕԹԻ-ԹԻՖԼԻՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

Թիֆլիսից մինչև Փօթի (ճանապարհորդների գնացքը) 9 ժամ 21 րոպէ առաւօտեան: Մինչև Միխայլովօ (խուռն գնացքը) երեկոյեան 5 ժամ. 18 րոպէ:

	առաւօտ:	երեկոյեան.
Թիֆլիսից	9. 21	5. 18
Գորի	11. 58	9. 43
Միխայլովօ	1. 29	11. 59
Րիօն	6. 47	
Փօթի	9. 40	
	առաւօտ:	
Փօթիից	9. 13	
Րիօն	12. 13	
Միխայլօվօ	5. 39	1. 37
Գորի	7. 5	4. 8
Թիֆլիս	9. 31	7. 56

Թիֆլիս գալիս է առաջին գնացքը երեկոյեան 9 ժ. 31 ր. երկրորդը՝ առաւօտեան 7 ժ. 56 ր.

Տեղերի գինը՝ Թիֆլիսից

	I կլաս.	II կլ.	III կլ.
Մցխէթ	90	68	38
Գորի	3. 20	2. 40	1. 33
Սուրամ	5. 22	3. 92	2. 18
Րիօն	9.	6. 75	3. 75
Փօթի	13. 1	9. 75	5. 42

ՓՕՍՏ

Ամեն տեսակ թէ նամակներ, թէ լրագիրներ և թէ ծանր փօստ ամեն տեղ ուղարկելու, ընդունվում են ամեն օր, առաւօտեան 8 ժամից մինչև 1 և կէսօրից յետոյ 3 ժամից մինչև 7: իսկ կիրակի օրերը հասարակ նամակներ մինչև 10 ժամ առաւօտեան և 3—7 երեկոյեան:

Ռուսաստանից և Արտասահմանից փօստը ստացվում է Թիֆլիսում ամեն օր: Բագուի տրակտից՝ երեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ: Փօթի-Թիֆլիսեան երկաթուղուց ամեն օր: Նուխու տրակտից չորեքշաբթի և կիրակի: Բելկլիւչի տրակտից երեքշաբթի և շաբաթ:

ՆԱՄԱԿՆԵՐ

	կօպ.
Բաց նամակ արժէ	2
Ռուսաստան և Եւրօպայի բոլոր երկիրները նամակը արժէ	7
Ամերիկա	7
Պարսկաստան	7
Հնդկաստան	70
Եգիպտոս	27

ԲԺՇԿԱՆՈՑ

Հիւանդների ընդունելութիւնը առաւօտեան 9-ից մինչև 1 ժամը:

Երկուշաբթի. Լիսիցեվ և Գօրալեվիչ ներքին հիւանդութիւնների, Քուչարեանց վիրաբուժական և աչքի հ., Բաբաեվ ջղային և հոգեկան հ.:

Երեքշաբթի. Մինկեվիչ վիրաբուժական հ., Բէյխ աչքի հ., Վերմիշեվ ներքին հ., Ժուրավլեվ վեներական և կաշու հ., Բաբօվ կրծքի և ներքին հ.:

Չորեքշաբթի. Լիսիցեվ ներքին հ., Աստուածատուրով կանանց հ.,

Հինգշաբթի. Վերմիշեվ և Բուդկօվսկի ներքին հ., Քուչարեանց սիֆիլիսի և միզային գործարանների հ., Ժուրավլեվ ջղային հ.: Բաբօվ կրծքի և ներքին հ.:

Ուրբաթ. Լիսիցեվ ներքին հ., Մինկեվիչ վիրաբուժական հ., Բաբաեվ ջղային և հոգեկան հ., Աստուածատուրով վեներական և կաշու հ.:

Շաբաթ. Վերմիշեվ ներքին հ., Բէյխ աչքի հ., Ժուրավլեվ վեներական և կաշու հ.:

Օբբէխտ, ատամի հ., ընդունում է իր տանը ամեն ժամանակ աղքատ հիւանդներին Բժշկանոցի տոմսակով:

«ՄՇԱԿԻ» ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

—

—ԳԱՆՁԱԿ. ***. Բոլոր նամակները կարդացվում են ուշադրութեամբ և եթէ կարելի է լինում նրանց ուղղել, ուղղվում են: Հաւատացէք, որ մենք զամբիւղը չենք գցի ոչ մի նամակ կամ յօդուած, որից կարելի է օգուտ քաղել:

—ԱԽԱԼՑԽԱ. Ա. Նամակից լուրեր կը քաղենք: Ոտանաւորները չենք տպի:

—ԴԱՒՐԷԺ. Արմենակ. Բոլոր նամակները, որ ստացել ենք ձեզանից, արդէն տպագրված են: Վերջին նամակը, սեպտեմբերի 9-ից, կը տպենք հետևեալ համարի մէջ: Շարունակեցէք գրել: Ձեր թղթակցութիւնները բազմակողմանի են լինում:

—ՄՕՍԿՎԱ. Դ. Պատասխանը չենք տպի: Գրեցէք մի ուրիշ հարցի վրա, ուրախութեամբ կը տպենք:

Дозволено Цензурою 5 Октября 1879 г. Тифлисъ. Տպարան Ա. Ա. Միխելսօնի Типографія А. А. Михельсона